ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր Քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի (1 տեղի թափուր դրույք) համար։

Դաստիարակի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի հաստատած դրույքաչափի։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի՝

1. դիմում
2. կրթության մասին փաստաթուղթ
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/
5. ինքնակենսագրություն
6. մեկ լուսանկար՝ 3/4 չափի
7. այլ պետության քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ զինվորական գրքույկ
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/
10. որակավորման տարակարգ /առկայության դեպքում/։

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 2025 թվականի նոյեմբերի 14-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:30-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի նոյեմբերի 18-ին՝ ժամը 11:00-ին «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 1 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում։

Հասցեն՝ ք. Արմավիր Հունան Ավետիսյան 2/2։